

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Օձուն համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Օձուն	Ավագանու արտահերթ նիստ	01.02.2020թ.	16:00	Օձունի համայնքապետարան, համայնքի ղեկավարի աշխատասենյակ (ՀՀ Լոռու մարզ, գ .Օձուն, 6-րդ փողոց, շենք 10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Տիպանյան, զեկուցող՝ Ա. Տիպանյան)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Տիպանյան, զեկուցող՝ Ա. Տիպանյան)

3. ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՅՐԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Տիպանյան, զեկուցող՝ Ա. Տիպանյան)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԶՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-112-0083-0007 ԵՎ 06-112-0083-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Տիպանյան, զեկուցող՝ Ա. Տիպանյան)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕԶՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-1053-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0029 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 19.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(որոշման նախագծի հեղինակ՝ Ա. Տիպանյան, զեկուցող՝ Ա. Տիպանյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

__ փետրվարի 2020 թվական, N ____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ, 10-րդ և 12-րդ մասերի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 16-րդ և 17-րդ հոդվածների՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 1-ի չորրորդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., փետրվարի ____,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու

2020 թվականի փետրվարի __-ի N __-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ __-Ի ԶՈՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ,

3. ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՅՐԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-112-0083-0007 ԵՎ 06-112-0083-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕԶՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՂԻ 06-112-1053-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0029 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 19.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

— փետրվարի 2020 թվական, N ____-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

2020թ., փետրվարի ____,
«ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն»

Հավելված

«ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
«<_____>> փետրվարի 2020 թվականի N _____ որոշման



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Լ Ո Ռ ՈՒ Մ Ա Ր Զ Օ Ձ ՈՒ Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

գ. ՕՁՈՒՆ

2020թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարգարժան պարոն մարզպետ, Օձուն խոշորացված համայնքի սիրելի բնակիչներ, հյուրեր... Ինչպես գիտենք, այսօր հավաքվել ենք ամփոփելու համայնքի բյուջեի 2019թ-ի կատարման արդյունքները, 2018-2022թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կատարողականը և ընդհանրապես խոսելու մեր ձեռքբերումների և անելիքների մասին: Առաջ անցնելով ուզում եմ շնորհակալություն հայտնել այն բոլոր պետական կառույցներին, որոնք համագործակցել են համայնքապետարանի հետ և ներդրումներ են ունեցել համայնքում իրականացվող ծրագրերում: Այդ համագործակցության արդյունքում մենք կարողացել ենք իրականացնել միջոցառումներ գրեթե բոլոր այն ուղղություններով , որոնք նախատեսված են եղել մեր զարգացման ծրագրում և համահունչ են եղել համայնքի զարգացման մեր տեսլականին: Իրականացվել են ծրագրեր, որոնք նույնիսկ անիրատեսական են թվացել զարգացման հնգամյա պլանի մշակման փուլում և որոնք նախատեսված են եղել իրականացնել հետագա տարիներին: Թույլ տվեք ամբողջ համայնքի անունից հատուկ շնորհակալություն հայտնել ՀՀ Կառավարությանը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը, Լոռու մարզպետարանին՝ իրենց

ցուցաբերած ֆինանսական և տեխնիկական աջակցության համար, որոնց դեռ կանդրադառնանք ըստ բնագավառների:

Սիրելի բնակիչներ, ուզում եմ մեկ անգամ ևս ձեզ ակտիվանալու կոչ անել, որպեսզի դուք ավելի շատ մասնակցեք համայնքի կառավարման գործընթացին՝ հանրային լսումներին, ավագանու նիստերին ձեր ակտիվ մասնակցությամբ, ձեր առաջարկություններով, առարկություններով, տեղական հարկերի, տուրքերի և վճարների ժամանակին վճարմամբ, որովհետև դրանից է նաև կախված համայնքի հետագա զարգացումը: Մեր բոլորիս խնդիրն է ունենալ զարգացած ենթակառուցվածքներով, տնտեսությամբ՝ հատկապես գյուղատնտեսությամբ և տուրիզմով, բարեկարգ ու գրավիչ համայնք՝ իր բոլոր բնակավայրերով:

Այժմ հակիրճ ամփոփենք համայնքի բյուջեի 2019թ-ի կատարողականը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

Օձուն համայնքի բյուջեն 2019 թվականին փաստացի կազմել է 297 միլիոն հազար 200 դրամ , ընդ որում սեփական եկամուտները կազմել են 64 միլիոն հազար դրամ, որից հարկերը և տուրքերը կազմել են 53 միլիոն 770 հազար ՀՀ դրամ:

1. Սեփական եկամուտների մեջ հողի հարկի տարեկան հաշվարկի պլանային չափը կազմել է 29 միլիոն 500 հազար դրամ, փաստացի կատարվել է 30 մլն 825 հազար 400, այսինքն՝ 104, 5 տոկոսով:

2. Փոխադրամիջոցների համար գույքահարկ նախատեսվել է 18 միլիոն 784 հազար 300 դրամ, փաստացի կատարվել՝ 21 միլիոն 698 հազար 400, կատարողականը՝ 115,5 տոկոս:

3. Հողի վարձակալության վճարները նախատեսվել են 7 միլիոն 200 հազար դրամ, փաստացի 7 միլիոն 774 հազար 980 կատարողականը՝ 108 տոկոս:

4. Աղբահանության վճարների հավաքագրումը նախատեսված 3 մլն դրամի փոխարեն կազմել է 1 մլն 586 հազար 400 դրամ, ինչը ենթադրում է, որ մեր աշխատանքները և ձեր պատրաստակամությունը բավարար չեն հավաքագրումները պատշաճ մակարդակով իրականացնելու համար, թեպետ քիչ չեն բնակչության շրջանում 2018-2019 թ-ի ընթացքում կատարված իրազեկման և բացատրական աշխատանքները: Նախատեսվում է ընթացիկ տարում աղբահանության վճարի հավաքագրման ցուցանիշը հասցնել 100 տոկոսի:

5. Պաշտոնական դրամաշնորհները նախատեսվել են 252 միլիոն 830 հազար 820 դրամ, փաստացի ստացվել է 233 միլիոն 1480 դրամ:

6. Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրված դոտացիան կազմել է 145 միլիոն 806 հազար 700 դրամ:

7. Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ Կառավարության տրամադրած պետական սուբվենցիաները և բնապահպանական սուբվենցիան նախատեսվել 94 միլիոն 20 հազար 920 :

Այսքանը ընդհանրական բյուջեի եկամտային հատվածի մասին, իսկ ծախսային հատվածում ունենք հետևյալ պատկերը.

**Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
(01/01/19 - 30/12/19թ. ժամանակահատվածի համար)**

			Տարեկան ճշտված պլան		Փաստացի		
Տողի			այդ թվում	Ընդամենը		այդ թվում	
NN	Եկամտատեսակները	վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	(ս.11+ս.12)	վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե	%
	2	8	9	10	11	12	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ այդ թվում՝	218 764 200	94020920	312 785 120	213019920	84061300	94,97
	1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ այդ թվում՝	49554300	X	49554300	53 770 690	X	108
	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից այդ թվում՝	29 625 000	X	29 625 000	30974340	X	104.55
	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	125000	X	125000	148960	X	119

<i>Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար</i>	29,500,000.00	X	29,500,000.00	30825380	X	104
1.2 Գույքային հարկեր այլ գույքից այդ թվում՝	18784300	X	18784300	21698360	X	115
Գույքահարկ փոխադրամիջոցների համար	18784300	X	18784300	21698360	X	115
1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ այդ թվում՝	1,145,000	X	1,145,000	1098000	X	95,89
Տեղական տուրքեր այդ թվում՝	1,145,000	X	1,145,000	1098000	X	95,89
ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար	100000	X	100000	75000	X	75
բ Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	845000	X	845000	823000	X	97
գ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի	200,000.00	X	200,000.00	200,000.00	X	100.00

	<i>թույլությունների համար</i>						
	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ այդ թվում՝	158 809 000	94020920	25283082	148940180	84061300	92
	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից որից՝	158809900	X	158809900	148940180	X	93
	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	145840700	X	145840700	145806700		100.00
	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ այդ թվում՝	0.00	X		34000	X	
	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	12969200	X	12969200	3099480	X	
	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից այդ թվում՝	X	94020920	94020920	X	84061300	89,40
	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐայդ թվում՝	10400000	0.00	10400000	10309050	0.00	87.34
	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ այդ թվում՝	7,200,000.00	X	7,200,000.00	7774980	X	107
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	7,200,000.00	X	7,200,000.00	7774980	X	107

3.5 Վարչական գանձումներ այդ թվում՝	3200000	X	3200000	2314070	X	72
Տեղական վճարներ,որից	3200000	X	3200000	2039670	X	63

Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ

(01/01/19 - 30/12/19թ. ժամանակահատվածի համար)

	Տարեկան ճշտված պլան			Փաստացի			
Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		%
	(ս.10+ ս11)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(ս.13+ ս14)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	

2	9	10	11	12	13	14	
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	355285120	21876420 0	136520920	330624700	207990470	122634220	93,05
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	117632000	8563200 0	32000000	96524430	81983630	14540800	82.05
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	90632000	7963200 0	11000000	78636300	76582230	2054070	86,76
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	90632000	7963200 0	11000000	78636300	76582230	2054070	86,76
Ընդհանուր բնույթի ծառայություններ	400000	400000	0.00	398400	398400	0.00	99
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	400000	400000	0.00	398400	398400	0.00	99
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	26 600 000	5600000	21000000	17489730	5003000	12486730	65,76
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490)	-41500000	4500000	-4590000	12331070	1836990	10494080	
ճանապարհային տրանսպորտ	34100000	3000000	31100000	31472830	706800	30766030	92,2
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-76600000	400000	-77000000	-19923150	348800	-20271950	

Աղբահանում	10000000	1000000 0	0	8188740	8188740	0	81,9
Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	139323120	6402200	132920920	99510650	5891350	93619300	71,63
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	21400000	1690000 0	4500000	16773800	16773800	0	
Փողոցների լուսավորում	16900000	0	16900000	16773800	16773800	0.00	0
ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860)	29150000	19150000	10 000 000	22586280	18606240	3980040	
որից՝							
Գրադարաններ	5,000,000.0 0	5000000	0.00	4980000	4980 000	0.00	
Թանգարաններ և ցուցասրահներ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	20000000	10 000 000	10000000	1386570	9885660	3980040	
Այլ մշակութային կազմակերպություններ	4050000	4050000	0	3640580	3640580		
Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	100,000.00	100,000. 00	0.00	100,000.00	100,000.00	0.00	
Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	

աշխատանքներ							
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980)	74880000	7188000 0	3000000	70599720	70599720	0	
որից՝							
Նախադպրոցական կրթություն	39500000	3950000 0	0.00	39300000	39300000	0.00	
Հիմնական ընդհանուր կրթություն	2600000	2600000		2598380	2598380		
Բարձրագույն մասնագիտական կրթություն	6300000	6300000	0.00	5622000	5622000	0.00	
Արտադպրոցական դաստիարակություն	25500000	2250000 0	3000000	22099340	22099340	0	
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	980,000.00	980,000. 00	0.00	980000	980000	0.00	
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	980,000.00	980,000. 00	0.00	980000	980000	0.00	
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	4,400,000.0 0	4,400,00 0.00	0.00	4110000	4110000	0.00	
որից՝							
Ընտանիքի անդամներ և զավակներ	900,000.00	900,000. 00	0.00	610,000.00	610,000.00	0.00	
Գործազրկություն	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	

որից՝							
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	3,500,000.00	3,500,000.00	0.00	3,500,000.00	3,500,000.00	0.00	

1. Աշխատակազմի պահպանման , հողի հարկի, գույքահարկի բազաների և ՀԿՏԿ կայքերի սպասարկման նպատակով ծախսվել է 76 միլիոն 582 հազար 230 դրամ:

2. Տնտեսական հարաբերություններ բնագավառում ունեցել ենք ծախսեր ասֆալտապատման աշխատանքների վրա 52 միլիոն : Հակակարկտային կայանների սպասարկման և գազի բալոնների լիցքավորման նպատակով ծախսվել է 348 հազար ր800 ՀՀ դրամ:

. Աղբահանության փաստացի ծախսը կազմել է **8 միլիոն 188 հազար 740 դրամ:**

4. Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառում ծախսը կազմել է **22 միլիոն 586 հազար 380 դրամ** , որից 12 միլիոն 865 հազար 660 դրամը՝ մշակույթի տների և գրադարանների պահպանման, շուրջ 1 միլիոն դրամով ձեռք են բերվել մարզագորգեր կարատեի խմբի սաների, մարզահագուստ , գնդակներ և դարպասի ցանց ֆուտբոլի խմբի երեխաների համար: 3 միլիոն 640 հազար 580 դրամ ծախսվել է համայնքային մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով (սպասք Մղարթ և Այգեհատ բակավայրերի համայնքային կենտրոնների համար, վաստակած հանգստի անցած ուսուցիչների տոնը շնորհավորելու, զինծառայողների ծնողների այցելություն Արցախ, զոհված ազատամարտիկների ընտանիքների աջակցության, վերջին զանգի աշխատանքների կազմակերպման), 100 հազար դրամ՝ եկեղեցու բակային ճամբարի կազմակերպման աշխատանքներին աջակցելու նպատակով:

5 . Կրթության բնագավառին հատկացվել է **70 միլիոն 599 հազար 720 դրամ**՝ որից մանկապարտեզներին՝ 39 միլիոն 300 հազար դրամ, արվեստի դպրոցի պահպանմանը՝ 22 միլիոն 99 հազար 340 դրամ, դպրոցների դասագրքերի վճարի՝ 2 միլիոն 598 հազար 380 դրամ, երեխաներին Ամոջից և հեռավոր թաղամասերից դպրոց տեղափոխման նպատակներով 980 հազար դրամ:

6. Սոցիալական պաշտպանությանը տրամադրվել է 4 միլիոն 110 հազար դրամ՝ համայնքի սոցիալապես անապահով խավի, նորածինների, Արցախյան ազատամարտի մասնակիցների ընտանիքներին աջակցելու նպատակով:

Այսքանը համառոտ թվային տվյալներ բյուջեի կատարողականի մասին, այժմ առավել հանգամանալից 2019թ. ընթացքում հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում և ընդհանրապես կատարված աշխատանքների և խնդիրների մասին:

2018-2022թթ Հնգամյա զարգացման ծրագրով 2019թ-ի համար
նախատեսված

աշխատանքները համառոտ

1. Ծաթերի ոռոգման ներքին ցանցի վերականգնում-1200գծմ – Կառավարության հրատապ ծրագիր, կատարող՝ Լոռու ջրանցք ԶՕԸ - կատարված է 2018թ
2. Օձուն և Հազվի բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգերի կառուցում-22մլն դրամ-170 լուսակիր, բնապահպանական սուբվենցիա-կատարված է շուրջ 250 լուսակիր
3. Այգեհատ բնակավայրի ներհամայնքային փողոցների հարթեցում 600մ դժվարանցանելի ճանապարհի հարթեցում, խճապատում -1մլն դրամ, կատարողը՝ համայնքապետարան / փոխարենը նախատեսվել է 350 գծմ ասֆալտ 2020թ-ին/
4. Կարմիր Աղեկ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի նորոգում 1,5կմ - 1մլն դրամ –տեխսփոխվել է 2020թ-ը՝ պայմանավորված տարածքային հիմնադրամի կողմից ունիվերսալ տեխնիայի տրամադրման ժամկետի փոփոխության հետ:

2.Շինարարություն

Օձուն խոշորացված համայնքի 2018-2022 թթ զարգացման ծրագրում ընտրվել է ռազմավարություն համայնքում ենթակառուցվածքների զարգացման ուղղված աշխատանքների ուղղությամբ, ինչն իր հերթին կնպաստի նաև տուրիզմի զարգացմանը: Սկսած 2018թ-ից Հայաստանի Հանրապետության Կառավարությունը համայնքներին հնարավորություն է տալիս համաֆինանսավորվող սուբվենցիոն ծրագրեր իրականացնել: Օգտվելով այդ հնարավորությունից՝ համայնքը 2018-2019թ-ին իրականացրել է նաև հետագա տարիների համար նախատեսված աշխատանքներ : 2019թ-ին Օձուն համայնքը ներկայացրել է 3 սուբվենցիոն ծրագրեր , որոնց նախնական արժեքը շուրջ 150 մլն դրամ է եղել:

Հնգամյա զարգացման ծրագրով ճապարհաշինության ոլորտում նախատեսվել է շուրջ 60մլն դրամի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ իրականացնել 2021-2022 թթ-ի ընթացքում: Սակայն 1,5 անգամ ավելի ծավալով աշխատանքներ իրականացվել են արդեն 2018-2019թ-ի ընթացքում: Հաշվետու 2019թ -ի ընթացքում Կառավարության կողմից տրամադրվող սուբվենցիայի ծրագրով , ասֆալտապատվել են Արևածագ, Ամոջ և Օձուն բնակավայրերում շուրջ 1,5 կմ երկարությամբ փողոցներ: Արևածագ բնակայրում հիմնանորոգվել և ասֆալտապատվել է շուրջ 400գծմ երկարությամբ հատված թիվ 13 փողոցում՝ համայնքային կենտրոնը մշակույթի տանը միացնող բանուկ հատվածում: Օձուն և Ամոջ բնակավայրերում ասֆալտապատվել է բնակավայրերը միացնող թիվ 13 և թիվ 1 փողոցների շուրջ 1100գծմ հատվածը, վերոհիշյալ ճանապարհները չէին նորոգվել ավելի քան 30 տարի: Ամոջից Օձուն մեքենայով հասնելու համար բնակիչները շրջանցում էին 2,5 կմ ճանապարհ: Օձունի 13-րդ փողոցը, որի մի հատվածը ասֆալտապատվել է 2019թ-ին, դպրոց և մանկապարտեզ տանող բանուկ փողոց է, վերոհիշյալ փողոցի մնացած 650գծմ հատվածը

Նախատեսվում է հիմնանորոգել 2020թ-ի ընթացքում: Ծրագրի նախահաշվային արժեքը 68,2 միլիոն դրամ էր, մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի գինը՝ 64,6 միլիոն դրամ, որից համայնքի համաֆինանսավորման չափը 45 տոկոս էր: Համայնքում յուրաքանչյուր տարի 1կմ երկարությամբ ասֆալտապատման աշխատանքների իրականացումը տեսանելի և համարձակ ձեռքբերում կլինի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ֆոնդային բյուջեի ձևավորման և համալրման խնդիր ենք ունենալու: Այս առումով ողջունելի կլինեին համայնքի գործարար հատվածի ներդրումները:

Համայնքի գրունտային, դաշտամիջյան և հեռագնա արոտներ տանող ճանապարհները կհարթեցվեն 2020թ-ին և հաջորդող տարիներին՝ պայմանավորված սեփական տեխնիկայի առկայության հետ:

Թեպետ հնգամյա ժամանակահատվածում, ելնելով սահմանափակ ֆինանսական ռեսուրսներից, նախատեսված չէր նոր ոռոգման համակարգերի կառուցում, բայց օգտագործելով Կառավարության ընձեռած հնարավորությունը՝ 65 տոկոս համաֆինանսավորում և գյուղատնտեսության զարգացումը խթանելու համայնքի տեսլականը, 2019թ-ի ընթացքում կառուցվեցին ոռոգման նոր համակարգեր Օձուն և Այգեհատ բնակավայրերում: Արդյունքում ինքնահոս եղանակով ոռոգելի դարձան 80-100 հա վարելահողեր Օձունի վարչական տարածքում և 20 հա տնամերձ հողամասեր՝ Այգեհատում: Տեղադրվել են 38 ջրթող կետեր: Ծրագրի նախահաշվային արժեքը 53,7 միլիոն դրամ էր, իսկ շինարարի հետ կնքված պայմանագրի արժեքը՝ 34,8 միլիոն դրամ: Պետք է նշեմ, որ նախատեսել էինք նաև վերականգնել, վերանորոգել նախկին ոռոգման ջրագծերը, մասնավորապես Կարմիր Աղեկ բնակավայրում, ինչը պատրաստվում ենք անել 2020թ-ի ընթացքում՝ կոմունալ տեխնիկան ստանալուց հետո:

Հաջորդ կապիտալ ծրագիրը, որը դեռ ընթացքի մեջ է, համայնքի բնակավայրերում խաղահրապարակների, հրապարակ-պուրակների կառուցման –վերակառուցման աշխատանքներն են: Ծրագրով նախատեսված է վերակառուցել Օձուն բնակավայրի Օձնեցու արձանի հարակից հրապարակը, Այգեհատի պուրակը, խաղահրապարակներ կառուցել և վերակառուցել մյուս բնակավայրերում, բոլոր բնակավայրերում

նախատեսված է տեղադրել անվանական նստարաններ , խաղասարքեր: Համայնքը հետագայում ևս խնդիր ունի հանգստի և ժամանցի վայրերի ստեղծման և արդիականացման հարցում:

2019թ-ին բնապահպանական սուբվենցիայով համայնքի ազդակիր բնակավայրերում՝ Օձունում և Հազվում կառուցվել են էներգախնայող լուսատուներով լուսավորության համակարգեր, ծրագրի ընդհանուր արժեքը շուրջ 22մլն դրամ է: Գնման ընթացակարգի արդյունքում տնտեսված գումարների հաշվին նոր մրցույթներ կազմակերպվեցին և նախատեսված 156 լուսակիրների փոխարեն տեղադրվեցին շուրջ 250 լուսակիրներ: 2020թ-ին շարունակելու ենք լուսավորության համակարգերի կառուցումը արդեն պետություն- համայնք համագործակցության շրջանակներում , լուսակիրներ կտեղադրվեն համայնքի բոլոր բնակավայրերում:

Նշեմ նաև , որ որոշակի ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացվել են նաև բնակավայրերի վարչական շենքերում և մանկապարտեզներում:

3. Կոմունալ տնտեսություն

2019թ -ի ընթացքում կատարվել է կանոնավոր աղբահանություն խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում: Աշխատանքները իրականացվել են <<Օձունի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի կողմից: Արձանագրվել են նաև խնդիրներ ` կապված պատմամշակութային հուշարձաններ տանող կաճաններում և դժվարամատչելի տարածքներում անընդհատ գոյացող աղբակույտերի հետ: Չնայած այն հանգամանքին , որ բացի աղբահանությունը , համայնքում տարվա մեջ մի քանի անգամ կազմակերպվել են շաբաթօրյակներ, մաքրվել են նաև նշված դժվարամատչելի տարածքները, փակվել են բազմաթիվ հին աղբավայրեր, բայց խնդիրը մինչև օրս արդիական է և ոչ հարիր մեր համայնքին: Համայնքապետարանը այս հարցում ունի նաև իր մեղքի բաժինը, բայց 2020թ-ին և հետագա տարիներին , կապիտալ ծրագրերի իրականացման հետ համատեղ պետք է լուծենք նաև համայնքի վարչական տարածքի մաքրության հարցը: Սա խնդիր է , որ ազդում է մեր համայնքի հեղինակության և գրավչության վրա : Հարգելի բնակիչներ ցավով

արձանագրում եմ նաև ,որ ձորափեշերին հարակից տարածքներից , առանձնատներից շարունակվում է աղբի թափումը , որն անընդունելի հատկապես այն պարագայում , երբ համայնքի բոլոր բնակավայրերում կատարվում է կանոնավոր աղբահանություն: Զգուշացնում եմ նաև , որ մշտադիտարկում ենք իրականացնելու և տուգանվելու են այն բնակիչները կամ իրավաբանական անձիք, որոնք կշարունակեն աղբաթափումը չսահմանված վայրերում :

Ակսած 2018թ.-ի հունվարի 1-ից Կառավարության պահանջով և համայնքի ավագանու որոշմամբ աղբահանությունը իրականացվում է մասնակի փոխհատուցմամբ՝ սահմանվել է վճար ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Այս մշակույթը ևս զարգացնելու կարիք ունի: Մատուցվող ծառայության դիմաց վճարելու պատրաստակամություն ձեր մեջ զարգացնելով՝ հասնելու ենք աղբահանության համար սահմանված վճարների 100 տոկոս կատարմանը:

Կոմունալ տնտեսության բնագավառում ամենամեծ ձեռքբերումը ունիվերսալ տեխնիկայի խնդրի լուծումն է: Դեռ 2018թ-ին համայնքը <<Տարածքային զարգացման հիմնադրամին>> դիմել էր 90 միլիոն ընդհանուր արժեքով բազմաֆունկցիոնալ տեխնիկա և ավտոգրեյդեր տրամադրելու համար, որտեղ համայնքի ներդրումը նախատեսվել է դրանց արժեքի հինգ տոկոսի չափով: Տեխնիկան համայնքին շատ անհրաժեշտ է թե կոմունալ բնույթի խնդիրներ լուծելու, թե գրունտային ճանապարհների բարեկարգման / հատկապես հեռագնա արոտներ տանող ճանապարհներ, դաշտամիջյան ճանապարհներ/ և ինչու չէ նաև գյուղատնտեսության զարգացման համար: Այստեղ խնդիր ունենք նախկին ոռոգման համակարգերը վերանորոգելու, վերագործարկելու: Նշեմ , որ համայնքը իր ներդրումը արդեն կատարել է և 2019թ-ի դեկտեմբերին համայնքին հանձնվել է ավտոգրեյդերը, մինչև փետրվարի վերջը սպասում ենք նաև էքսկավատորին: Տեխնիկան կօգնի լուծել համայնքում առաջացող կոմունալ և ճանապարհային բնույթի բազմաթիվ խնդիրներ: Նախատեսվում է նաև տեխնիկան վարձակալությամբ տրամադրել և համայնքի բյուջեն համալրել լրացուցիչ ֆինանսական մուտքերով: Ավագանու որոշմամբ համայնքի բնակիչների համար կսահմանվեն տեխնիկայից օգտվելու արտոնյալ պայմաններ:

4. Գյուղատնտեսություն

2020թ. հունվարի 1-ի դրությամբ Օձուն խոշորացված համայնքում առկա են խոշոր եղջերավոր անասուններ՝ 4625 գլուխ, խոզեր՝ 1865 գլուխ, ոչխար և այծ՝ 1420 գլուխ, ձի՝ 202, թռչուն՝ 12192 թև , մեղվաընտանիք՝ 827 հատ:

Մշակվել են հացահատիկային կուլտուրաներ՝ այդ թվում ցորեն 1151 հա, գարի 7 հա, եգիպտացորեն 98 հա, արևածաղիկ 3 հա : Կարտոֆիլի ցանքսը կատարվել է 325 հա-ի վրա, միջին բերքատվությունը մինչև 18 տոննա: Բանջարաբոստանային կուլտուրաներ մշակվել են 61 հա, բազմամյա բույսեր և այլ կերային կուլտուրաներ 768 հա:

Կառավարության հրատապ ծրագրով գյուղացիներին տրամադրվել է ազդուական պարարտանյութ 156 տոննա՝ պարկը 6600 դրամով, առվույտի սերմ 500 կգ՝ 1500 դրամով, եգիպտացորեն 96կգ՝ 350 դրամով, կորնգան 18կգ՝ 370 դրամով, գարնանացան ցորեն՝ 500 կգ, 150դրամով

Նոր ոռոգման ցանցի կառուցման արդյունքում նախատեսում ենք ունենալ բանջարաբոստանային կուլտուրաների ցանքսի աճ: Ավելի արդյունավետ հողագործություն զարգացնելու նպատակով , համայնքը իր միջոցներով և տեխնիկայով վերականգնելու է նաև նախկին ոռոգման համակարգերը:

Գյուղատնտեսության բնագավառն ընդհանրապես համայնքում նորամուծությունների կարիք ունի, նոր մշակաբույսեր, հողի մշակման նոր մոտեցումներ, խելացի անասնագույններ և այլն: Պետք է արձանագրեմ նաև , որ վերջին տարիներին այս առումով առաջընթաց ենք ապրել, ավանդական հացահատիկային կուլտուրաներից, կարտոֆիլից բացի հիմնվել են ազնվամորու մի քանի հեկտար ցանքատարածություններ, մշակվում է նաև լոբի, լոլիկ: Այստեղ էլ գյուղացիները իրացման խնդրի առջև են կանգնել՝ հատկապես ազնվամորու հարցում:

5. Մշակույթի և սպորտի ոլորտ

Սիրով պետք է արձանագրեմ, որ մշակութային կյանքը շատ ակտիվ է համայնքում, հատկապես Օձուն բնակավայրում, որտեղ գործում են Օձունի Մանկական արվեստի դպրոցը և Մշակույթի տունը;

Օձունի Մանկական արվեստի դպրոցում սովորում են մոտ 120 աշակերտներ, գործում են երաժշտական տարբեր գործիքների՝ դաշնամուրի, ջութակի, ժողգործիքների, ժողովրդական երգի և նկարչության դասարաններ: Ուրախությամբ արձանագրում եմ այն փաստը , որ այժմ ունենք վերանորոգված արվեստի դպրոցի մասնաշենք , որն ապահովված է ջեռուցման լոկալ համակարգով և անհրաժեշտ գույքով, գործիքներով: Միջոցառումները արվեստի դպրոցում կազմակերպվում և մատուցվում են բարձր մակարդակով: Արվեստի դպրոցի սաները հաջողություններ են գրանցում տարբեր մրցույթներում, փառատոններում: Դպրոցում գործող նկարչական խմբերի սաները հաջողություններ են գրանցել հանրապետական մրցույթներում:

Օձունի Մշակույթի տանը գործում են թատերական, պարի, կարատեի, ձեռագործ աշխատանքների, անգլերենի խմբակներ: Գործող խմբակներն ունեն բավարար պայմաններ, ինչի արդյունքում մենք ամեն տարի արձանագրում ենք տարբեր խմբակներ հաճախող երեխաների թվի աճ: Մշակույթի տանը ` տնօրեն Գոհար Մարյանյանի մեծ աշխատանքի և նվիրումի արդյունքում, շուքով նշվում են բոլոր տոն օրերը, կազմակերպվում են նաև ոգեկոչման մեծ միջոցառումներ: Ուրախալի է հատկապես այն փաստը, որ միջոցառումներին ներդաշնակորեն մասնակցում են մշակույթի տանը գործող բոլոր խմբերը:

Օձունի մանկական արվեստի դպրոցի և Մշակույթի տանը գործող խմբերի սաները ակտիվ մասնակցություն և հաղթանակներ են ունեցել տարբեր մարզային, հանրապետական, միջազգային մասշտաբների մրցույթների, փառատոնների, դարձել են 1-ին , 2-րդ կարգի դափնեկիրներ: Հանրապետական մրցույթի դափնեկիրներ են հասցրել դառնալ նաև Ճախարակ ձեռագործ աշխատանքների խմբերի սաները:

Օձունի մշակույթի տանը գործող կարատեի Կեմպո մարզաձևի սան Կրեժ Դավթյանը Ռուսաստանի Ռոստով քաղաքում կայացած աշխարհի 16_րդ առաջնությունում փոխչեմպիոնի տիտղոսին արժանացավ: Ամռանը երևանում , իսկ աշնանը Թբիլիսիում ՔՈՒՆԳ ՖՈՒ-ի աշխարհի առաջնության մրցաշարերում Օձուն համայնքից մասնակցող մարզիկները ցուցաբերեցին բարձր արդյունքներ և արժանացան բարձր մրցանակների, ոսկե և արծաթե մեդալների: Օձուն համայնքի ղեկավարի կողմից, մեր համայնքի անունը բարձր պահած մի շարք մարզիկներ արժանացան նաև դրամական պարգևների: Խմբի սաները այնքան շատ առաջնությունների են հաղթող դուրս եկել, որ բոլորին 2019թ-ի ընթացքում չենք հասցրել պարգևատրել: Համայնքը բարձր է գնահատում մարզիչ Գառնիկ Սարգսյանի նվիրումը և պատասխանատու վերաբերմունքը իր աշխատանքում:

Գործում է նաև Արևածագի մշակույթի տունը: Նախատեսվում է Արևածագի մշակույթի տանը ևս ավելացնել խմբակների թիվը, որպեսզի հարակից գյուղերի երեխաները կարողանան հաճախել այնտեղ: Համայնքի արվեստի և մշակութային օջախները գտնվում են համայնքապետարանի մշտական հոգաձուլության ներքո:

Համայնքը բարձր մակարդակով մասնակցեց նաև <<Բերքի տոն 2019>> ամենամյա միջոցառմանը, որն այս անգամ անցկացվեց Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրում :

2019թ-ին ուշադրության կենտրոնում են եղել նաև ժամկետային զինձառայողները :2016թ-ի ապրիլյան քառօրյայից հետո, առաջին անգամ կազմակերպեցինք այց Արցախի զորամասեր: 2019 թ-ին արդեն չորրորդ անգամ այցելեցինք զորամասեր՝ Օձուն համայնքի զինձառայողներին տեսակցության, նրանց ծնողների, համայնքի ղեկավարի և հոգևոր հովիվ Տեր-Վրթանես Բաղայանի անմիջական մասնակցությամբ: Այս միջոցառումը միտված էր զինվորներին ևս մեկ անգամ քաջալերելու, վստահեցնելու, որ գտնվում են համայնքի մշտական ուշադրության կենտրոնում: Ասեմ , որ առաքելությունն իր նպատակին հասավ , ոգևորվեցին և զինվորները և ծնողները: Երկօրյա այցը ծնողների համար նաև ճանաչողական բնույթ ուներ, նրանք հնարավորություն ստացան լինելու Արցախի տեսարժան

վայրերում: Նախատեսել ենք ավանդույթը պահպանել և ամեն տարի համայնքի բոլոր բնակավայրերի զինակոչիկների ծնողներին հնարավորություն տալ այցելելու և ոգևորելու իրենց զավակներին:

6. Տուրիզմ և արտաքին կապեր

Ամեն տարի համայնքի կողմից աշխատանքներ են տարվում ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ինչը միտված է նաև տուրիզմի և տնտեսության այլ ոլորտներում ներդրումների համար համայնքը գրավիչ դարձնելուն: Համայնքի բնակավայրերի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, պատմամշակութային արժեքների առկայությունը, հյուրանոցի և հյուրատների առկայությունը, ենթակառուցվածքների առկայությունը, ինչու չէ՛ ներկայիս մասսամբ բարեկարգ վիճակը, ստեղծում են բարենպաստ պայմաններ տուրիզմի տարբեր տեսակների զարգացման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում համայնքի մաքրությանն ուղղված միջոցառումներին , պարբերաբար կազմակերպվում են շաբաթօրյակներ: Համայնքը համագործակցում է այն բոլոր կառույցների հետ, որոնք աշխատանքներ են կատարում տարբեր բնակավայրերում տուրիզմի զարգացման հնարավորությունների ուսումնասիրման ուղղությամբ:

Ուրախությամբ արձանագրում են այն փաստը, որ համայնքում հաջողությամբ գործում և զարգանում է հյուրատնային բիզնեսը: Ընդհանրապես զբոսաշրջային բիզնեսը համայնքում զարգացնելու համար ունենք բավարար հնարավորություններ՝ աշխարհագրական նպաստավոր դիրք, բնակլիմայական մեղմ պայմաններ, պատմամշակութային հուշարձաններ, ասֆալտապատ, լուսավոր փողոցներ : Պետք է նշեմ , որ համայնքի պատմամշակութային արժեքները աշխարհին վերջին տասնամյակում ավելի ճանաչելի են դարձել շնորհիվ մեր հոգևոր հովիվ Տեր Վրթանես Քահանայի:

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

— փետրվարի 2020 թվական, N ___-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2018-2022 թվականների հնգամյա սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2018 թվականին իրականացված ծրագրերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., փետրվարի _____,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՆԱԽԱԳԻԾ

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

__ փետրվարի 2020 թվական, N ____-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՅՐԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հարկային օրենսգրքի» 19-րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի «Համայնքի ավագանու կողմից

գույքահարկի եվ հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի N 300 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 822-Ն որոշման՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի եզրակացությունը և կարծիքը.

1. քաղաքացի Սեյրան Նալբանդյանի նկատմամբ կիրառել հարկային արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., փետրվարի _____,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն

ՍԵՅՐԱՆ ՅՈՒՐԻԿԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Հարկ վճարողի անվանումը՝ իրավաբանական անձի դեպքում, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը	Հարկ վճարողի գրանցման (հաշվառման) հասցեն	Գույքի գտնվելու հասցեն	Գույքի տեսակը (նկարագրիր)	Սոցիալական քարտ համարը (ֆիզ անձի դեպքում)	< Վ ><	Հարկատուի կորմից հայցվող արտոնության գումարի մեծությունը (<< դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները:	Հարկատուի նկատմամբ կիրառված, << հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնության տեսակը	Արտոնության կիրառման ամիսը, անսաթիվը, տարին	Համապատասխան հարկատեսակի գծով կիրառված արտոնության չափը, գումարի մեծությունը (<< դրամով), իսկ հարկի ժամկետային արտոնության տրամադրման դեպքում՝ հետաձգման ժամկետները:	
1	2	3	4	5	6	7	8	9	10	արտոնության տեսակը	արտոնության չափը՝ << դրամով
1	Սեյրան Նալբանդյան	<< ԼՄ Օձուն համայնք, փողոց 5, տուն 45	գ.Օձուն	փոխադրամիջոց, մակնիշը՝ ՄԵՐՍԵԴԵՍ ԲԵՆՑ 430, պետ. համար անիշը, 93US999, 1999թ.		S0250030	84705	հարկից ազատում	30.01.2020	2017թ. գույքահարկի տույժ	39549
										2018թ. գույքահարկի տույժ	40851
										2019թ. գույքահարկի ապառք	4305
	Ընդամենը										84705
	Ընդամենը						84705				

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

— փետրվարի 2020 թվական, N ____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԶՈՒՆ ԳՅՈՒՂԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-112-0083-0007 ԵՎ 06-112-0083-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 55-րդ հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, Օձուն համայնք գյուղ Օձուն, փողոց 6 թիվ 4/1 հասցեում գտնվող, 06-112-0083-0007 կադաստրային ծածկագրերով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման 0,01595 հեկտար մակերեսով հողամասի (այսուհետ՝ հողամաս) նկատմամբ ճանաչել՝ Արտակարգ Իրավիճակների Նախարարության, Լոռու մարզային փրկարարական վարչության, Թումանյանի հրշեջ փրկարարական ջրկատի Օձունի հենակետի՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը :

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) Օձուն գյուղի վարչական տարածքում գտնվող, Օձուն համայնք գյուղ Օձուն, փողոց 6 թիվ 4 հասցեում գտնվող, 06-112-0083-0013 կադաստրային ծածկագրերով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման 0,0372 հեկտար մակերեսով հողամասի

(այսուհետ՝ հողամաս) նկատմամբ ճանաչել՝ Արտակարգ Իրավիճակների Նախարարության, Լոռու մարզային փրկարարական վարչության, Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատի Օձունի հենակետի՝ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը :

3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով անշարժ գույքը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

2) Հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետով սահմանված հողամասը՝ անշարժ գույքի հետ միասին, ուղղակի վաճառքի կարգով օտարելու հետ կապված հարաբերությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

(հեղինակ՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան,
գեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան)



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

— փետրվարի 2020 թվական, N ____-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕԶՈՒՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՋԻ 06-
112-1053-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0029 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՐ ԵՎ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 19.38 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 57-րդ, 63-րդ, 66-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման՝

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանին որոշում է.

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավարի առաջարկությունը.

1. Համայնքի սեփականությունը հանդիսացող, համայնքի վարչական տարածքի, գյուղ Օձուն, փողոց 5 թիվ 10/1 հասցեում գտնվող, 06-112-1053-0009 կադաստրային ծածկագրով (Վկայական N 15012020-06-0046), բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0029 հեկտար մակերեսով հողամասը

(այսուհետ՝ անշարժ գույք) և հողամասում առկա 19.38 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ատամնաբուժական կենտրոնը ճանաչել օրինական և ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած անձ Գագիկ Էդիկի Թորոսյանին:

2. Քաղաքացի Գագիկ Էդիկի Թորոսյանին հողամասը և շինությունը ձեռք բերելու համար Օձուն համայնքի բյուջե պետք է վճարի 0,0029 հեկտար մակերեսով հողամասի համար 10000 (տաս հազար) ՀՀ դրամ և 19,38 քառակուսի մետր շինության համար 120400 (հարյուր քսան հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Համայնքի հողերի օգտագործման սխեմայով անշարժ գույքը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

Հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

4. Համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել անշարժ գույքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու հետ կապված հարաբերությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ ()

Դեմ ()

Ձեռնպահ ()

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2020թ., փետրվարի ____,
ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն